ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ք. ԳՐԻԳՈՐՅԱՆ

8 դեկտեմբեր 12 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 109

Ձեռնարկողը՝ ***<<Պ և Օ>> ՓԲԸ***
Ք. Երևան, Հավարյան 13/1

Գործունեությունը՝ ***Պողոշյան համայնքի վարչական տարածքում նախատեսվող արտադրական տարածքի կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Կոտայքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրենի ժ/պ՝ Ռ. Ոսկանյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 109

«19» 12 2018թ.

«Պ և Օ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Պռոշյան համայնքի վարչական տարածքում նախատեսվող արտադրական տարածքի կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ò»éÝ³ñÏáÕ՝	«Պ ԵՎ Օ» ՓԲԸ
Նախագծող՝	«Քոնսեկոարդ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Պռոշյան համայնք
Գործունեության կատեգորիան	/Գ/ կատեգորիա

Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի «Պ ԵՎ Օ» ՓԲ ընկերությունը Կոտայքի մարզի Պռոշյան համայնքի վարչական տարածքում նախատեսում է կառուցել արտադրական շինություններ:

Գործունեության նպատակն է կառուցել արտադրական շինություններ և ենթակառուցվածքներ, ներդրումային ծրագրերի շրջանակներում արտադրական գործունեություն կազմակերպելու համար:

Կառուցապատումը նախատեսվում իրականացնել Կոտայքի մարզի Պռոշյան համայնքի վարչական տարածքի Վանահովիտ թաղամասին մերձակա տարածքում, որը հանդիսանում է պատվիրատու «Պ ԵՎ Օ» ՓԲԸ սեփականությունն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 01022018-07-0066 վկայական:

Տարածքի մի կողմով անցնում է Երևան-Աշտարակ մայրուղին, Պռոշյան բնակավայրի ուղղությամբ ցանկապատված արտադրական տարածք է, որտեղ զբաղվում են ագրոարտադրությամբ, Երևանի ուղղությամբ Վանահովիտ բնակելի թաղամասն է, դեպի հարավ-արևմուտք ամայի, չօգտագործվող տարածք է:

Նախատեսվում է կառուցել երկու հիմնական արտադրական մասնաշենք, որոնցից յուրաքանչյուրը ունի 1000մ2 մակերես: Երկու մասնաշենքերի միջև տեղադրվում է պահեստային մասնաշենքը, որն ունի 432,0 մ2 մակերես: Օժանդակ կառույցներն են. էլ. ենթակայան, կաթսայատուն, ԳԿԿ, ջրի կարգավորման կետ, ծածկած ավտոտնտեսություն եվ այլն: Նախատեսվում է կառուցել քարե ցանկապատ:

Համալիրի ադմինիստրատիվ մասնաշենքը նախատեսվում է կառուցել արտադրական մասնաշենքերի առաջնամասում: Այն երկհարկանի է և ունի 1000մ² մակերես, նկուղային հարկը տրամադրվում է մեքենաների կայանման համար:

Արտադրական մասնաշենքերը իրենցից ներկայացնում են միահարկ H=5,7մ, ուղղանկյունաձև՝ 18.0x60.0մ առանցքային չափերով, երկայնական ուղղությամբ

բազմաթռիչք՝ սյուների 6.00մ քայլով, լայնական ուղղությամբ միաթռիչք՝ 18.0մ թռիչքով,տանիքի փոքր թեքությամբ շինություններ:

Նախագծվող արտադրական շինությունների հիմնական կրող տարրերը նախատեսվում են կառուցել հետևյալ կոնստրուկտիվ բնութագրումներով:

- Հիմքերը նախատեսվում են իրականացնել միաձույլ ե/բետոնից, կետային՝ սյունակալների տեսքով (башмак), որոնք հիմնականում տեղադրվում են պողպատե սյուների տակ և իրար հետ կապվում են միաձույլ ե/բետոնյա որմնահեծաններով: Որմնահեծանները տեղադրվում են հիմնային կարկասի արտաքին կողմից, որի վրա տեղադրվում են շենքի պատերը: Առաջին փուլի աշխատանքային նախագծով ե/բետոնյա հիմքերի տակ նախատեսվում են բետոնե կամ խամքարբետոնե նախաշերտ՝ կախված կրող գրունտների խորությունից:

Նախատեսվող կառուցապատման աշխատանքների ընթացքում հողային աշխատանքների ծավալը կազմում է՝ 17265 մ^3, որը ամբողջությամբ կօգտագործվի որպես ետլիցք և տարածքի հարթեցման ու ճանապարհների ներքին շերտի համար:

Ջրամատակարարումը կատարվելու է տարածքի մոտով անցնող խմելու ջրի ջրատարից:

Կոյուղին նախատեսվում է միացնել հարևանությամբ անցնող քաղաքային կոյուղատարին:

Բնական գազի մատակարարումը նախատեսվում է իրականացնել ավտոմայրուղու մոտով անցնող գազատարից, կնքելով համապատասպան պայմանագիր «Գազպրոմ Արմենիա» ընկերության հետ:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում մթնոլորտի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով: Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն: Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ.

- շինարարական հրապարակների ցանկապատում՝ անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերի լվացում,
- շինանյութերի, ավելցուկ գրունտի և շինարարական աղբի տեղափոխում՝ ծածկված մեքենաներով,
- շինհրապարակի պարբերաբար ջրում,
- սորուն նյութերի (ավազ, ցեմենտ) պահեստավորում փակ տարածքներում, կամ թաղանթներով ծածկում,
- բուսածածկ տարածքներում շինարարական աղբի և հողերի կուտակումների բացառում,
- տեխնիկայի շարժիչների պարբերաբար կարգաբերում,
- չոր եղանակներին խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում՝ ջրցանման միջոցով,
- շինարարական տեխնիկայի տեղաշարժը և աշխատանքը իրականացվելու է միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը, նոր տարածքների խախտումը և աղտոտումը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխատանքներն իրականացվելու են ջրային ռեսուրսներից բավականին հեռավորության վրա, կարելի է եզրակացնել, որ թե շինարարության, և թե շահագործման ընթացքում որևէ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա չի լինի:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, շինարարական աղբն է (ծածկագիր 9120060001000): Այն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

<u>Եզրահանգում</u>՝ Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, որի ընթացքում ազդեցությունները թույլատրելի նորմերի սահմաններում են և կրում են ժամանակավոր բնույթ: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի վերաբերյալ կազմակերպվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցները և ազդակիր համայնքը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը:

Փորձաքննական պահանջ

Շինություններում արտադրությունների տեղադրման կամ կազմակերպման համապատասխան փաստաթղթերը, <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքով սահմանված դեպքերում, մինչև իրականացումո, անհրաժեշտ է ներկայացնել բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պ և Օ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Պռոշյան համայնքի վարչական տարածքում նախատեսվող արտադրական տարածքի կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Ա. Դռնոյան

Մասնագետ՝ Զ. Զուռնաչյան